ՄՇԱԿ

№ 7 ՅՈՒԼԻՍ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 7

Անմեղութիւն (պատկեր)։
Աղբիւր (ոտանաւոր)։—*Ս. Տ. Մկր.*
Արեւածագ (ոտանաւոր).—*Սիմ. Բաբիեան։*
Ամառային ուրախութիւններ.—*Անգլ. փոխադր. Տիկ. Հայկ.*
Զեկուցում մեծապատիւ սիժոնուատեր պ. Ներսէսեան—*Ծերունի։*
Սողոմոնի պարտէզը (Առակ)։—*Սահակ վարդ. Ամատունի։*
Որսորդներ (պատկեր)։
Հայ ուսուցիչ (ոտանաւոր).—*Խ. Բաբայեանց։*
«Վեզուվի գիտնական պահապանը».—*Ջ. Տ.-Գրիգորեան.*
Իմ բազաւորութիւնը (ոտանաւոր).—*Գ. Նալբանդեան։*
Կրկեսում (պատկեր)։
Երերում Հանդարտիկ (ոտանաւոր).—*Սիմ. Բաբիեան.*
Սուրբ երգակ (վերջ)։—*Կ. Ջ.*
Ինաստալից մտքեր։

Ա Ղ Բ Ի Ւ Ր

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար

№ 7

XXI ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 1903 Թ.

ԹԻՓԼԻՍ
Типографія Бр. Таварткиладзе. | Տպարան եղբ. Թաւարտկիլաձէ
Сѣргіевская ул. № 1

Дозволено цензурою, Тифлисъ, 13 августа 1903 г.

Ս. Ցամբուրիւ

ԱՂԲՐԻՆ

—

Աղբիւր, դու հոսիր, վազիր, կարկաչիր, չուր տուր արտերին, պար-

Սէգը Քրիս. ծաղիկներ են սպասում, սիրոյդ կարօտով այրուում, պասպասկում:

Ս. Տ. Պէտ.

ԱՐԵՒԱԾԱԳ

Թաւնիր մատաղուղի
արեւագալին
Ձգալի կերպով փարատուել
սկսեց.
Ամպերը գիխս վերեւ ճեղքուցին
Եւ պարզ երկնքի մի մասն երեւեց:

*

Պղպեղ ատոդերն իրար եռուխց
Ատիճանաւաքար մարեցին, հանգան,
Եւ նման չողեր թափում է վերից
Այժմ մեղմ-մեղմակ գունատ լուսնկան:

*

Դաշտից զովասում հովիկ է փչում
Եւ մեղմ օրօրում սաղարթ ու ծաղիկ.
Լճակի ափին, փարթամ պարտիզում
Սոխակն է երգում ուրախ դայլայլիկ:

*

Երկնի պերոզակն անբիծ գեղութեամբ
Փայլում է հիմա պարզ, ծիծաղերես,
Եւ պայծառ արփին վէս շքեղութեամբ
Ծագում է ամէնչիկ մի մեծ գնդի պէս...

Սիմ. Բարխեան

ԱՄԱՌԱՅԻՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Եկաւ վայլուն ամառը իր ամբ, շոշոպան արեւով, կապոյտ երկնքով ու քաղցր օդով։

Պարտէզները լիքն են դոյնզդոյն, անուշահոտ ծաղիկներով։ Հովիտ ու մարգագետին ծածկւած նոր հնձած անուշաբոյր խոտով։

Թռչունները թռչկոտում են ծառերի վրայ ամէց ամ. աշխատասէր մեղուները զբաղած են ձմեռւան պաշարի պատրաստութեամբ։

Սիրուն, չտըպուրիկ—խայտաբղէտ թիթեռները վայլուն արեւի ճառագայթների տակ, ծաղկից ծաղիկ թռչռելով՝ անց են կացնում իրանց կարճատև կեանքը։

Ուրախ են նաև փոքրիկ երեխաները, որոնք ողջ տարին ջանասիրութեամբ իրանց պատերը սովորելով, այժմ վայելում են ամառային երկար արձակուրդը։

Ի՛նչպէս չաւ է, երկար աշխատելուց յետոյ վայ-

վրել մաքուր, առողջարար օդի մէջ. և փոքրիկները վազում են, զարճանում և իրանց հնչիւն ծիծաղով օդը թնդացնում:

Ծնողների հետ երբեմն նրանք փոքրիկ ուղևորութիւններ են կատարում, դէպի մօտակայ դիզեցիկ տեսարանները և նրանց սիրունութեամբ հրճւում:

Սակայն շոքը շատ է զօրում, ուստի անուշ-անուշ գնում ամառանոց՝ քեռանց, հօքիրանց կամ մօքիրանց գիւղը:

Փոքրիկներն անչափ ուրախ են, որ երկար ամիսն անան գիւղում:

Մի խասին եօթն են. եօթն էլ մաքրասէր, ուսոյ և առողջ են: Ամենափոքրը որ դեռ նոր է սկսել տոտի-տոտի անել—ման գալ, իսկ և իսկ մի փոքրիկ գառնուկ է, անունը Սիրունիկ: Ամենամեծը՝ Արփիկը տասներկու տարեկան է, մի շատ խելօք ու աշխատասէր աղջիկ, ամեն գործում օգնում է իր սիրելի մայրիկին և երբէք չի բարկացնում նրան: Լևոնն ու Զաքարը՝ մինն ութ տարեկան, միւս՝ վեց, ուշիմ, խելօք ու աչքաբաց երեխաներ են: Մնացած երկքը պատկիկ աղջիկներ են՝ Մարգարիտ՝ նունուշ ու Լուսիկ անունով:

Ամառանոցը դեռևս մի դեղագարդ բլրակի լանջի վրայ, որի տարրտակից մի վճիտ առուակ է հոսում:

Փոքրիկները՝ իրաւունք խնդրելով ծնողներից, բոլորը միասին, կռնաբռնուկ արած գնում են առ-

ակի ափ, որ ոտաբոբիկ մտնեն ջուրը: Այդ բանը մեծ ուրախութիւն է պատճառում փոքրիկ չարաճճիներին:

Արփիկը մնում է ափին, որ փոքրիկ Սիրունիկին պըահեցնի. միւսները հանում են իրանց ոտնամանները, ծնկնաչորներին մինչև ծունկը ետ ծալում, որ թաց չըլինի, որովհետև եթէ թաց լինի հագների շորերը, կարող են մրսել և հիւանդանալ: Առաջ ու առաջ Մարգարիտան է մտնում ջուրը և երևակայում է, թէ ինքը Ովքինոսն Կրիւզոն է կղզու վրայ մեն—մենակ: Նունուշը նստում է մի մեծ քարի վրայ և ոտները ջրի մէջ դնում: Լուսիկը վախենում է ջուրը մտնել, նա շարունակ տատիկներից մին մէկը, մին միւսը դնում է ջրի մէջ և իսկոյն էլի ետ քաշում: Վահոն բարձրանում է գետն ի վեր Զաքարը ոտքերով չփչփացնում ջուրը:

Այդպէս երկար ուրախանալուց յետոյ ջուրը մրոտ ողները դուրս են գալիս ջրից, ոտնամաններին հագնում և գոհ սրտով վերադառնում տուն:

Վերադարձին փոքրիկները վազվզում են թիթեռնիկների ետևից, մորեխներ բռնոտում և կամ կանգ առնում ու մտիկ տալիս, թէ ինչպէս իրանց նման ուրիշ փոքրիկներ ճարպիկ կերպով չուանցատկի են խաղում, կամ գնդախաղի տալիս:

Անգլ. փոխադր. Տիկ. Հայկ.

ՉՆԿՈՒՑՈՒՄ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԻԺՈՆԱՏԻՐ Պ. ՆԵՐՍԷՍԻՆ

—

Երեսը կոկիկ
Պիժոնը քոքիկ
Միշտ վազ է տալի:
Կարպետ ու խալի
Գերի են ընկել.
Աչ, ձախ, հար ճանկել...
Մի կողմից միւսը
Ծռում է իր ուսը,
Դալարում, յանկարծ
Մի հոտ շատ արծարծ
Քնթին է դիպչում.
Ուղեղին կպչում:
«Այդ դո՛ւ ես, մկիկ,
«Սպասէ թխլիկ.
«Ա՛խ, ա՛յդս դուրս գայ,
«Ներակո՛ւր չըկայ՝
«Անտէ՛ր-անտիրունչ:

«Դուրս ցցէ՛ քո դունչ,
«Դէ՛հ, չա՛ւ, մի՛ քաշւիր,
«Ինձ ընկեր հաշւիր:
Չմայեց մկին
Եւ չոքաւ քկին,
Մին խփեց թաթով,
Մթին պոչի կոթով
Տւեց զոռ հարւած:
Շիւռն, սո՛ւզ ու լա՛ց:
Մուկը հասկացաւ
Որ այդ սրտացաւ
Եղոտ մռութը
Եւ նրա գութը
Միայն պատրանք էր,
Վրէն ծաղրանք էր:
Բայց թէ ինչ արած,
Ամեն յոյս կորած,
Պիժոնի ձեռքին
Եւ նրա կամքին
Չլու հպատակ
Կրում է կատակ:
Իսկ անամօթը
Իր պոչի ճոթը
Ոլորից... կամա՛ց
Եւ թաթերը ցած...
Դունչը շիպ շիտակ
Մկան դնչի տակ:

Թր՛ևակ, կրկին հարած...
Դէ՞հ, էլ, Տէր Աստած...
«Մուկ, ի՞նչ օրի ես,
Մկիկի ոճը
Փառաւոր կերպով
Տօնեց անվրդով:



«Թիֆլի՛ս, Գօրի՛ ես:
Խեղճը ի՞նչ գիտէր,
Մ՚ոլորած անտէր,
Նա վազ էր տալի,
Արտասուք լալի:
Ոսկ մեր Պիժոնը
Դէս դէն շուռ տուց,
Մ՚էկ էլ, այլ Տինգ վեց
Դուռ ապտակներից,
Կրած ցաւերից
Մ՚ուկը աստակեց:
Բայց թէ հրցաւեց

Սրան Պիժոնը,
Տւեց իր ձօնը՝
Քաշ տւեց մի կողմ,
Եւ շատ ամաչեմ
Խեղճին ճաշակեց
Եւ խաղը փակեց:
Սրա խակ մասին

Ահա Սերսէսին
Յայտարարում ենք
Եւ շատ ցաւում ենք,
Որ այս Տանդէսին
Ալանատեսին
Հայր. Կ.....-ին
Յղճահաս դէտին
Պէտք է վիպել,
Որ, ա՛հ, չէր վայել.
Պիժոն փիսիկին
Թէ եւ քիսիկին
Այդքան անպատկառ
Լինել անպատճառ:

Ալեւոտի

ՍՈՂՈՄՈՆԻ ՊԱՐՏԷԶԸ

Սարեկ եւ Լագլագ

(Ս. ռ ա կ)

Հերմոն սարի գագաթից արևը դեռ նոր դուրս հանած՝ արձակել էր իր բոց ճառագայթները Պաղեստինայի Ենգադդայ սարի լանջերի վրայ փռուած այգեստանեայց վրայ։ Այնտեղ բայց արած դորդի պէս մարդի աչքի լիս էր քաղում և իմաստուն Սողոմոնի խնկելի պարտէզը, որի վրայ դրօսասէրը արքան սէր ու սիրտ դրած՝ ծանր ծանր դումարներով աշխարհի ամեն կողմերից դուրս էր քաշել տւել և բերել այստեղ ամեն հազուագիւտ ծառ և ծաղիկ, ու այս կերպ աճելուվիճան և առատ պտղի հասցրել նրան։

Պարտիզի վերի մասը արհեստական կերպով գեռնից երեք կանդուն կտրելով, այդ տափարակութեան վրայ նա աչ և ձախ կարգ կարգ տնկել էր տւել Սէյլանից բերած ընտիր կինամոմոն, Հնդկաստանից՝ անուշահոտ նարդոս ու հալէ, Արաբիայից՝ կնդրկի, Ափրիկէից՝ զմուռի և Պաղեստինայից ստաշխի ծառեր։ Այդ տափարակութեան լանձև վերջատը շրթանց վրայ ուռճացել էին և դեղունակ խնձոր, նուռն և մշտադալար

արմաւենիք, ամեն մինը իր կողքին կապոյ կապոյ ունելով հոտանոյշ շուշան, քրքրում և մանրագոր։ Իսկ դրա լայնարձակ պորտում՝ շափիւղայ քարից դեղաքանդակ եզերքներով շինել էր տւել մեծամեծ աւազաններ ու լողարաններ, որոնց մէջ պաղտնի ճանապարհներով եփրատայ հովտից հանւած էին զուլալ ջրեր և ականակիտ աղբիւրներ, որոնք զօրն ի բուն դուրս թափւելով աւազանների և լողարանների ոսկեձոյլ ծորակներից, ոլորտապտոյտ փախչում էին ամեն մի ծառի արմատի մօտից, և ապա երկու իրար սիրած էակների պէս իրար խառնւելով՝ մի այլ տեղից զոռում գոչումով վիժում էին դէպի յած և ոռոգում պարտիզի երկրորդ մասը, որը խաղողի բազմատեսակ որթերով էր միայն զարդարւած։

Եւ որպէսզի աշխարհիս բոլոր վայելքների և վայելչութիւնների տիպն ու պատկերը իր աչքի առաջ տեսնելու լինի, կենցաղասէրը արքան ժողովել էր այստեղ ամեն տեսակ խօսնակ հաւեր ու թռչուններ, որոնք ամենայն խնամքով պահւում էին վերոյիշեալ աւազանների մօտ անկւած կիպարոս սիւների վրայ, առանձին առանձին արծաթամատաս վանդակներում։

Բացի այս չքնաղ տեսարաններից ու շէնքերից, պարտիզի երկրորդ մասի արևելեան և արևմտեան ափերի վրայ դէմ առ դէմ շինւած կային և երկու զեղեցկաշէն հովանոցներ, շէնքեր՝ որոնք իրանց վառուռութեամբ կատարեալ դրախտ ներկայացնելով, պահում էին իրանց մէջ՝ Աստուծոյ մեծութիւնը և նրա արդարութիւնը ճանաչող միմիայն մի հատ արդար, որ նոյն ինքն էր այս բոլոր ձիւաւակերտների ինքնիշխան տէրը,—իմաստունն Սողոմոն, որը երբեմն ոսկեձոյլ զահի, երբեմն զալար մարգագետնի վրայ բազմելով, ի խրատ ապագայի դրում էր մաղաղաթի վրայ իր սրտի, մտքի և լեզւի տատանծատուր շնորհները։ Եւ այսպէս մի պայծառ առաւօտ, այն ինչ մի ստւերաշատ լանճորևնու տակին նստած՝ իր սիրելի հարսի բերանից պատգակւած շրթունքով դրում էր այս հատւածը.—«Եկ, եղբօրորդի իմ... կանխեսցուք յայգիս. տեսցուք՝ թէ ծաղկեաւ իցէ որթն, ծաղկեալ իցէ նռնն, ծաղկեալք իցեն նռնենիք, անդ տացս զսիրելս

Wilderer

իմքեզ», հէնց այս վայրկենին լսելի եղան կառքի և գնացքի որոտընդոստ ձայները, և դարբ առան պարտիզի դռան առաջ։ Այս ձայնի վրայ՝ պարտիզի հարաւային կողմից ձիւնափայլ հանդերձով դուրս թափուեցին իրանց ապարանքներից Սողոմոնի 60 թագուհիները և 80 հարճերը իրանց ապաստուրեղ անմիւս օրիորդների հետ, և Սողոմոնի ձեռքի շարժմամբ և ակնարկութեամբ մի վայրկեանի մէջ կտրեցին պարտիզի դուռը։ Բայց դուռը մեծ ճանչմամբ. մեծարելի եկուորը Սաբայ թագուհին էր, որը մի քանի օր առաջ իմաց էր տուել իր գալուստը Սողոմոնին։ Ո՞վ կարող է բացատրել այն մեծ սէրն ու ընդունելութիւնը, ինչ որ Սողոմոնի ձեռնասուն ապաստուհիները միաբերան և միահամուռ ցոյց էին տալիս այս մեծ հիւրին։ Շըրջապատեցին անմիջապէս նրա ոսկեզօծ կառքը, իջեցրին ներքան կառքից, և ապա ամենայն ակնածութեամբ փոխ առ փոխ նրա ձեռ ու բազուկը մտնելով՝ անարև տեղով տարան հասցրին իրանց ախորժ հովանոցը, որն ընդունէց ամենայն արքայավայել շքով, նոր ոսկի և մարգարիտ տեղալով նրա նազուկ ոտների տակ։

Եօթն օր և եօթն գիշեր մնաց թագուհին Սողոմոնի մօտ. և տեսաւ նա Սողոմոնի տան և թագաւորութեան վեհապանծ փառքն ու մեծութիւնը ասելի՝ քան որ լսած էր՝ ու լսեց բերանէ բերան Սողոմոնի իմաստուն և շնորհալի խօսքերն ասելի՝ քան որ պատմած էին իրան։ Եւ ինչ կարող էր նա մի աբատ և փիծ դնել Իսրայէլի այս յաղթական և իմաստուն թագաւորի տան և թագաւորութեան վրայ, քանի որ լսելիքից և մարիչ դուրս ամենայն անհաս և անհնարաւոր բան նա յաջողութեամբ ձեռք էր բերել իր իմաստութեան և անբաւ հարստութեան շնորհիւ, և այնպէս կարգել ու կազմել իր տունն ու թագաւորութիւնը։ Եւ ահա հէնց այս էր պատճառը, որ խեղճուկ թագուհին շւարած շլացած և հայել մոլել եղած Սողոմոնի վրայ, էլ ուրիշ զով ու զովասանք չըգտաւ նրանցով իր սիրտը նրան բացատրելու, բայց այս պարզ և միամիտ խոստովանանքը, որն ասաց նրան երես առ երես մաղած սրտով.— «Երանելիք են կանայք քո, և երանելիք են ծառայք քո, որք կան առաջի քո և հանապազ լսեն զիմաստութիւն քո»։

Սակայն մի բան ևս շատ դժարն եկաւ Սողոմոնի, որ խոր-
համանկ Յաղուհին չըկարողացաւ ծածկել նրանից, և ասաց
նրան հեգնութեամբ հէնց այն ժամանակ, երբ կատ մատ և
անհետ եղաւ իր աչքից։ Ա՛յդ այն էր, որ Սողոմոնն իր
պայծայլիկը Թռչնոց Թագաւոր դնելու և այն միակ
Թռչունը, որի ձայնի թաղցրութիւնից ասում են, ջրերն էլ
կանգնում, և որը գտնւում է Չինաստանում, և երկու սուս-
համերիկ պահապաններով պահւում է մի պարտիզի մէջ։

Դժւարին էր Սողոմոնի համար այս յաւը տանել, ուստի
դալուկ և խախիծ սրտին, մի ոտի տրտիմամբ բարկացած
հրամայեց յած իջնել տանն մի Թռչուն իր Թագից, որնք և
ահահաղ պահահաղ խոկոյն և եվ շարւեցին իր առաջ փշա-
քաղւած։ Եւ ապա ասաց նրանց սպառնալից.—«Գիտէք ինչի
համար ձեզ կանչեցի. մի խնդիր, ծանր խնդիր ունիմ ամենքիդ։
Ասում են, որ Չինաստանում մի պարտիզի մէջ՝ իրան ձայնի
թաղցրութեամբ ջրերը կանգնեցնող մի ոսկեվիեռուր Թռչուն
կայ, որն ինձանից անյայտ միտքով, չեմ ընկերացրել ձեզ։
Ուստի ով որ խօսք կըտայ ինձ, որ նրա անուշ տալն ու
բառը, անսխալ վեր կառնի և կըբերայ ինձ մօտ առնելու, ես
նրան յաւիտեան անկորիչ չամչով ու խաւրմով կըպահեմ և
ոսկէ լայանով ջուր կըտամ։ Այժմ ով որ ձեղանից շնորհ ունի
այս խնդիրս կատարելու՝ Թող յառաջ գայ»։

Սողոմոնի այս կարճ և տղու առաջարկութիւնից յետոյ,
կռնչն ու տղմուկը տիրեց նրա ձեռնասուն անասուններուի մէջ,
երբ ծոի պլխին տալով՝ ասում էր.—«Ծաղ ու բառ վերցնելը ոչ
մէկիս բանը չէ, մի գնար»։ Դաքաւը լորի խօսքը հատուտան-
լով՝ ասում էր, «Մենք լաւ ճոլտի տնազ կարող ենք անել,
մեր ինչ բանն է, չերթիմանք»։ Կճեպակը կաքաւի ասածին հա-
ւանելով՝ ասում էր, «Մեր ձէնն ու շնորհը մենք կարող ենք
միայն սարերում ծախել, մեր ինչ բանն է Չինաստան գնալ,
չերթիմանք»։ Այսպէս էլ Թութակը, գեղձանիկը, սալամը, կռունկը
և մինչև իսկ ձայնաւոր սոխակը երբ ամօթապարտ երեսով ի-
րանց անկարողութիւնը խոստովանեցին և քաշւեցին իրանց
բները, այն ժամանակ ծիծաղերես և վստահ Թռչները Թափ ստ-
լով մէջ եկան Սարեկն ու Հաղլաղը, և իրանց գնալու յօժա-

բումիւնը յայտնեցին Սողոմոնին, իրանց բերանից էլ պետ մի ապշանապ դիր էլ չնորհելով նրան։ Սողոմոն դիջանելով նրանց աղերսանքին, մանաւանդ Լապլապի, որը շատ տափաւորութիւնից խօսքերն էլ անգամ պարզ չէր արտասանում, հրաման տուեց դնալու։

Քառասուն օր, քառասուն դիշեր, անհայ, անջուր, ծովեր, ցամաքներ կարելով, վերջապէս մեր բախտախնդիր Սարեկն ու Լապլապը մտան Չինաստան և հասան դատն այն պարտէզը, ուր ապրում էր Սողոմոնի ատած թռչունը. բայց տարաբախտաբար դատն պարտիզի դուռը փակ. որովհետև ճաշի ժամանակ լինելով, պահապաններից մէկը դնացել էր տուն հայ բերելու, իսկ միւս բնակիչն էլ ներսից դուռը փակելով՝ քնել էր։ Սարեկը այս յարմար դէպքը նկատելով, էլ ժամանակ չկորցրեց. ուսաի շունչ ու սիրտ հաւաքած՝ բացեց իր թևերը և վեր ու վայր սուրալով՝ դնաց իջաւ ոսկեփետուր թըռչունի մօտ, որը կարծես զգալով իր նոր և անծանօթ հիւրի գալուստն ու նպատակը, մինչև կատարած ու կրակոտ սկսեց խօսել, որ Սարեկի բերանը բաց մնաց։ Եւ ապա այնուհետև ինքը Սարեկը, գիր ու գրչամ սովորող ուշագիր աշակերտի պէս ականջը վեր քաշելով, մի քանի ժամուան մէջ՝ նրա վարժուկ խոզ ու մաղը, նրա կակուղ շշուկը, նրա անուշ ճռճռոցը այնպէս անթիերի ու անսխալ կլեց ու տեղաւորեց իր կոկորդի մէջ, որը իր քէֆն էլ եկաւ։ Եւ այսպէս այն ինչ մեր սիրուն Սարեկը մի այսպիսի հրեշտակային երգասացուհիտով և ձայն ու եղանակներ վեր առնելով էր զբաղած, մեր Լապլապն էլ, մի ոտը գետին, մի ոտը բարձր, վիզը կուչ ու ձիլ անելով՝ կանդնած էր պարտիզի դատն մօտ մի կոպմի վրայ, ողբմալիութեան հաւաքող ուղտերի պէս, և չարաչար ապաստ էր հայ բերելու համար տուն գնացող պահապանի գարտնանը. և երբ եկաւ պահապանը, և դռնից կախ ընկած երկաթը բռնելով պինդ պինդ թակեց դուռը, և նրա ընկերն էլ ներսի կողմից դատն վազել փակը մի քանի անգամ լիակատարելով բացեց դուռը, Լապլապը կարծելով որ այդ դևդևկոցն ու ծիրիկոցն է իր սովորելիք բանը և այն թռչունի ձայնը, որի մասին ասաց Սողոմոն, ուսաի մի ոտ չետ մի ոտը առաջ

դնելով, սրեց իր ականջն և սկսեց փակի հանած աննշան ձայներն առնել ու երգել—լալ լալ լալ լալ, և ապա դռնից երեսը շուռ տալով՝ ի նշան իր երգի մարտադրվեան, թափ տուեց իր կոտրը և գնաւ իր առաջից թռչող Սարեկի ետևից։

Այսպէս տհա մնը Սարեկն ու Լապլապն իրանց խնդրած ուսմունքն առարեալով, յետ գալ՝ձան Սողոմոնի մօտ հէնց այն ժամանակ, երբ նա շրջապատուած իր սիրելի և հաւատարիմ հարճերով և ծառաներով հաշ էր ուտում վերոյիշեալ ապտակների մօտ անկած հովտաձն բևեռնեաց և եղևնեաց տակին, աչքը չուր կարած իրանց դալստեան համար։ Եւ երբ յանկարծակի աչքն ընկաւ Սարեկի և Լապլապի վրայ, ուրախութիւնից, բերկրութիւնից մռայեց ու քաղցեց, ուտի և կանչեց մեծաձայն «Մատուռակ պինէ»։

Լցրեց մատուռակը ոսկէ բաժակը լի գինով և դրեց սեղանի վրայ, ապա ինքը Սողոմոն գառնալով Սարեկին՝ հրամայեց երգելու։ Սարեկն էլ ինչ տեղ պիտի ցոյց տար իրան նոր շնորհքը, որ Սողոմոնի սէս խոշ ու գնահատող ունենար։ Բայց սրեց իրան շնորհալի բերանը և հաւատացաւ լեզուն և կանգնեց ու կանչեց այնպէս քաղցր, այնպէս անուշ, որ Սողոմոնը խոպան մոռանալով, խոպան սրտից հանելով Յարայ Թագուհու Շիմասանի Լուչանի մասին իրան երեսին ասած նախատական խօսքը, բերել տեց այն մատեանը, ուր գրած էին ի գէմս իրան Լուզուհու ասած այս խօսքերը—«Երանելիք են կանայք քո, և երանելիք ծառայք քո»։ Եւ ապա իրան՝ Լուզուհուն ուղարկելու համար, ուելայրից այդ խօսքերի տակին—«Ու երանելիք են Լուչանք իմ», որից յետ Սարեկին իր ունեցած ապտակի շնորհքի համար, իրրև պարգև հրամայեց իր ծառային ձգել նրա վրայ մի ան Լանկագին սամուրենի, որն է իր սպի սէս փայլուն փետուրներն ու մորթին իսկ Լապլապին էլ իր փծուն և անճաշակ երգի համար, որ երգից նա հայից յետոյ, հրամայեց հագցնել տեղ տեղ կարկատած մի չալ Լիւ, որն է իր սպիտակախառն ան փետուրներն ու կաշին։ Իսկ այս ամենից յետոյ, Սարեկին իր սահուն երգի անունով կանչեց Սարեկ, իսկ Լապլապին էլ իր արագ ու լակ ձուի պէս աննշան երգի անունով մերթ Արագիլ, մեր Լապլապ։

Սահակ վարդապետ Ամատունի



X.

ՀԱՅՈՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Անցեալս ազգի դու ինչ՛պ կըրթիչ,
Բազմաչարչար հայ ուսուցիչ,
Դիմով ցիւար, միշտ տխուժած,
Լուռ տանջուում ես՝ մեռով լարուած:

Երէ կարդաս գրիր հին-նոր,
Քեզ կըկանչեն խելացնոր.
Որպէս «գրից խելագարուած»՝
Դու կըլինես միշտ հալածուած:
«Հայ վարժապետ»֊ից կըկանչեն,
Մինչ գերեզման֊ից կըտանջեն.
Կըլինես «ծակ փիլիսոփայ,—
Ցուրտ ու տաքի միշտ ենթակայ:
Հազի՛ր հին ես նոր եւ ոչ էլ նոր,
Քաղցած անցրո՛ւ դու ամեն օր,
Պէտք է ապրել ոչ լոկ հացով,—
Հայն այդ գիտէ նահապիկ խելով:
Մէջքիդ կապած սամոխով,

Գիշեր ցերեկ հացի հոգսով,—
Ուշիս դու միշտ դասարկ գրպան,
Որ մկներն ևս չոկ պահապան:
Թևպէս լինիս դու շատ գիտուն,
Չես ուրիշների հանգիստ մի տուն,—
Գիխիդ հատար, հանգիստ ամիլուն,
Որտեղ գտնես խաղդ մի խուն:

Խ. Բաթալեանց



«ՎԻՉՈՒԻՆԻ ԴԻՑԵՆԱԿԱՆ ՊԱՀԱՊԱՆԸ»

Մի քանի տարի սրանից առաջ Նէապոլում վախճանեց յայտնի եւ գիտնական պրոֆեսոր Պալմիէրին: Կեա դար իր կեանքից նա անց էր կացրել Վեզուվի զազաթին, որտեղ նրա թախանձանքով եւ ցանկութիւններով դիտանոց (օբսերվատոր) էր շինած: Պալմիէրին հրնարեց բազմաթիւ գործիքներ, որոնցով նա ուսումնասիրում էր եւ անընդհատ ու աչալուրջ դիտում էր հրաբուխի բոլոր երեւոյթները: Գետնի ամենաթոյլ սասանումն, հողի յանկարծական ուղղութիւնը, հրաբուխի խառնարանում տեղի ունեցող ամեն մի նոր երեւոյթի ակիզբն ու վերջը—վաղօրօք յայտնի էր լինում Պալմիէրիին, եւ ամեն մի լուրջ վտանգի մասին նա կարող էր վաղօրօք նախազգուշացնել շրջակայ քնակիչներին: Սակայն ինքը Պալմիէրին՝ իր բնակարանի եւ օգնականների հետ՝ խրտնածէբար բոլոր ննջասրկած էր լինում վտանգի: Այնպէս էր պատահում, որ լաւայի հեղեղը հոս կողմից շրջապատում էր դիտանոցը, որտեղ ապրում էր Պալմիէրին, եւ մինչեւ լաւայի սառչիլը դրսի մարդկանց հետ յարաբերութիւնները ընդհատում էին: Այն ժամանակ բերակը, որի վրայ շինած էր դիտանոցը, նմանում էր մի կղզու՝ բոցավառ, հրային գետի մէջ: Տարութիւնից լաւամուտների ապակիները տրաքում էին. կտուրի վրայ եւ պատկի մէջ թափում էր տաք մոխիրը. բարերը տրաքում էին ոսմերկի նման. ապառաժների թնդիւնից չէր կարելի մարդու ձայն լսել. գանազան գազերի հոտից մարդիկ բնչ որ թուլութիւն էին զգում,—իսկ Պալմիէրին եւ իր օգնականը այդ ժամանակ դիտում էին իրանց գործիքները եւ իրանց դիտողութիւնները գրում՝ ժրաջանալով, որ այդպիսի անվիճելութեամբ նրանք կարող են կեանքից զրկել: Պատահում էր, որ խառնարանի մօտ, գիտական գբօսանքի ժամանակ, Պալմիէրին ուշացած էր լինում վերադարձը գազերից, որոնք դուրս էին գալիս հրաբուխի ճեղքերից: Այդ վտանգից խուսափելու համար՝ լեռան վրայ ման են գալիս՝ երկար ծողի վրայ կախած՝ վառած լապտերով,

որը տանում՝ են առաջներից, հետո բռնած. եթէ լապտերը մարում՝ է, դա նշանակում՝ է, որ մօտ տեղերում կայ մի ծակ, որից խնդրող գազ է դուրս գալիս:

Պաշ՝միէրին հրատարակել է իր բազմաթիւ նկատողութիւնները եւ դիտողութիւնները, որոնք պատկերացնում՝ են Վիզուալի կեանքը եւ պատմութիւնը: Մինչեւ իր երկարատեւ կեանքի վախճանը նա դասախօսութիւններ էր կարդում Ուլապուլի համալսարանում՝, մինչեւ վերջն էլ այնպէս հետաքրքիր եւ կենդանի, թնշալէս իր կեանքի ծաղկի հասակում: Իր մօտից մի քանի տարի առաջ Պաշ՝միէրին առաջարկեցին Ռոսալիայի ժողովրդական կրթութեան նախարարի պաշտօնը, բայց նա հրաժարուեց, որ առիթած չլինի իր երկու սիրելի որդիներին—Վիզուալին եւ պրոֆեսորութիւնը: Թէեւ նա ակադեմիկոս էր, ծերակոյտի անդամ՝ եւ շատ շքանշանների տէրը, սակայն շատ բիչ նշանակութիւն էր տալիս այդ բոլոր պատիւներին: Երբ նա մեռաւ, պետութիւնը իր հաշուով շքեղ թաղման հանդէս կազմակերպեց: Ռուսական երիտասարդութիւնից բաղկացած բազմութիւնը գնում՝ էր իր պաշտելի ուսուցչի դագաղի հետից, բազմաթիւ գիտական ընկերութիւնների ներկայացուցիչները եւ բազմութիւն հասարակ ժողովուրդ ուղեկցում՝ էին «Վիզուալի գիտական պահապանի» աճիւնին, որը լաւ ճանաչում՝ էր իր հրային հրէշին եւ երբ հրաբխային ուժերից ապրատահած ժողովրդին ասում էր «Վախենալու բան չկայ»,—ժողովուրդը հաւատում՝ էր նրան եւ հանգստանում՝:

Պաշ՝միէրին մեռաւ 89 տարեկան հասակում՝:

Զ. Ֆէր-Գերիգոռեան

ԻՄ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Անմե՛ղ, աննի՛զ, իմ յուսաշո՛ղ վանկտիւն,
Ցիշո՛ւմ եմ ես աննրջալիւ սուրբ պատկեր,
Երա վրայ պայծառ դէմքեր զարթուն—
Քոյրերս ուրախ եւ վանկատուն մեր երգեր:

Անա՛ յուշիկ:—Ես փառասէր մի տղայ,
Ոչի բախիծով չոմուտ եի երկիրդած:
Երանի՛ աշխոյժ օծուտ եիլի ինձ արեայ,
Թղթէ թագը, ալ-ծիրանիւն տարածած:

Փոխրիկ եղբայրս՝ եպիսկոպոս-բազաղիր,
Թանիմարեանը՝ վիրօնիւն վոխարկել,
Ոսկ խեղճ արեան՝ այս երկինւն արտասուտ:

Ի՞նչն եր այնժամ սիրտս յաչիս կարեկիր...
Ա՜խ, հիմա՛ էլ չո՞ց եմ չինուտ անուրգել,
Բայց այժմ ա՛ներգ, ո՛րպ մուրացի՛կ ու տրտուտ...

Գ. Նալբանդեան

Կրկէսում

ԵԹԵՐՈՒՄ ՀԱՆԴԱՐՏԻԿ...

—

Երբեմն հանդարտիկ ամպիկ եմ յոդում՝
Իրանից չունի ոտդակը դեպ կիրպիս բռնած
Եւ ասես՝ ալեծուփ ովկիանի վերում
Ջարմն եմ բուռ բնկրտում խոշակից կիզած

—

Արեից տաքացած ծովից անձկահար
Գնալ վեր առիւծում, բարձրում եմ
ամպեր
Եւ ջրում դեպ հետն փերոպի կառնար,
Զգեցով վէս ալեաց առնուն քաւերեներ...

Պետ. Քարթեան



ՍՈՒԼԱԿ ԵՐԳԱԿ *)

Հեղինակ Նիւբոլմի առակը

—

Յանկարծ նա դողդողաց և սկսեց սկանչ դնել։ Ա՜յդ ինչ զարհուրելի ձայներ էին։ Կարծես թէ այն բոլոր երեխաները, որոնց ուսուցիչն իր կեանքում կրամըթիկ և ծեծ էր ուտեցրել, հիմա խմբուել էին մեռածին նրա լուսամուտի տակ և գոռում էին։ Նրանց ոռնոցից և գոռում զոչումից լուսամուտի ապակիները թնդում էին։

Ուսուցիչը ծալեց իր գիրքը և տեղից վեր թռաւ։

—Այսօր բաւական է, ասաց նա աշակերտներին։ Այնպէս եղանակ է, որ մարդու ձայն չէ լսւում։ Եւ նա աշակերտներին տուն ուղարկեց։

Իսկ երեխան իր սուլակով արդէն հեռու էր, գիւղի մէջ տեղը և թախկացաւ իջևանի մեծ պահլիճի լուսամուտի տակ, այնտեղ դերձիկ Պետը պատրաստւում էր իր նրբասրինդի վրայ պարի եղանակ ածել։

Ահա Պետը սկսեց ամենաձոր պոլկան ածել, իսկ երեխան

*) Տես «Ազբիւր» № 5—6։

սկսեց նրա ածածը հետը կրկնել, բայց կէս ձայնով ցածր։ Նոյն մաքրութիւնով և խկութիւնով, նւագում էր նրբասրինդը, նւագում էր նոյնպէս և սուլակը, բայց կէս ձայնով ցածր, կպչելով նրբասրինդին ինչպէս մի քաղցած ապրուկ։

Դերձիկի զարմանքին չափ չկար, թէ ինչու այսօր նրա նւագը այդպէս տարօրինակ է դուրս գալիս, կարմրում էր, փնչում, աչքերը չռում էր և այտերը ուռեցնում օդապարիկի նման։

—Այդ ինչ է քեզ պատահել, կոչում էին աղջիկները։ Այդ ինչպէս ես դու այսօր ածում։ Ո՜հ, ինչպէս ես դու խարդախում։

Դերձիկ Պետը սկսում էր աւելի ուժով փչել, բայց սուլակն էլ նրանից յետ չէր մնում և նոյնպէս բարձրաձայն էր ածում, կէս ձայնով միայն ցածր։

Այն ժամանակ բոլոր երիտասարդները սկսեցին քահ քահ ծիծաղել Պետի վրայ։ Նա ամբողջովին կապտեկից ու կարմրեկից, ան մոգերից կաքում էին քրտինքը և օձանելիքը։ Նա պարարում էր և պատրաստ էր տալիս իր տանը գործած կապտագոյն հանդերձի և պատառուռ կարմիր փողպատի հետ, նա նրբանում էր վրան հնգկապարկի։ Իսկ նրբասրինդը շարունակում էր խարդախել։

—Ես ճիշտ եմ ածում, ես գիտեմ, որ չեմ խարդախում, գոռում էր նա արտասուքը աչքերին և վերջապէս նրբասրինդը դէն շպրտեց, բայց սուլակն էլ արդէն հեռացած էր, անտառի մէջ էր սուլում։

Ուստաչուհու տան առաջ նա կրկին կանգ առաւ։ Ուստաչուհին ճիշտ այդ միջոցին գրում էր «Ժողովրդական երաշտութիւնը և նրա նշանակութիւնը» վերնագրով յօդուածը։ Եւ երեխան նրան ցոյց աւեց երաժշտութիւն։

Գործես մի ամբողջ նւագախումբ լինէր լուսամուտի տակ։ Ուստաչուհին ճչալով վեր թռաւ իր տեղից։

—Իյա ինչ բան է, բացականչեց նա—ուղիղն ասած, ես այս ձայների մէջ և բոհի մէջ մի ժողովրդական եղանակ եմ նկատում։ Բայց ինչպիսի նեղսրտութիւն, ձայների կատակութիւն։ Այս ինչ բան է իրաւ։

Այստեղ երեխան աւելի թնդացրեց: Ձայները աճում, երգում, հրճւում, իրար էին խառնւում, կրկին դաւում անձրեւի նման շաղւում և հողմի նման պատյտ էին գործում... Ուսուցչուհին չէր կարող իր տեղը մնալ:

—Այս հարկաւոր է թննել, բացականչեց նա և անից դուրս թռաւ, բայց անտառի մէջ արդէն կորչող երեխայի կրնկի ծայրը տեսաւ: Ուսուցչուհին վազ աւից նրա հետից:

Քամին աւելի և աւելի ուժիղ էր փչում: Խիտ անտառը թրթռրիկ բարձրացաւ:

Երեխան թփի հետից նետում էր լիր լիր և ուսուցչուհին շատից այն կողմը, բայց հրաժիշտը արդէն ծառի քամակն էր, երկար վազի սար ձայն արձակելով:

Ուսուցչուհին հողմի նման վազ աւից դէպի այդ ձայները:

Բայց երեխան նրանից արագոտն էր և ուսուցչուհին յանց միայն հեռւից մի տեղ նըրբասլնդի խուլ բզկոյը: Ջունչը կրարւած, նա վազից այն կողմը, չորացած տերեներր կոխ տալով, կոտրտւած ծառերի միջով:

Նա սայթաքում էր քարերից, խրւում էր ջրերի մէջ, իսկ սուլակի ձայները աւելի և աւելի հեռու էին տանում և վերջապէս հանդչում հեռւում, որպէս ջուխակի մի լար, որ ուսուցչուհուն չըյաջողեցաւ ձեռք ղցել:

Նա նստեց դետնի վրայ, արցունքով վիրաւորւած ծունկը, յետոյ կապ է կապ դնում տուն—ժողովրդական երաժշտութեան յօդւածը վերջացնելու:

Երեխան երեկոյեան վերադարձաւ տուն իր ծնողաց մօտ տեղեկութիւն տալու համար: Նրա ծնողները վախենում էին, աչքերը վազում, իսկ շրթունքները ժպտում էին:

—Դու ինչի ես ուրախացել, հարցրեց մայրը:

—Ես նրանց դլխին մի խաղ խաղացի, պատասխանեց նա:

—Ի՞նչ, ասաց հայրը տուն մտնելով,—ինչ պէտք է դու խելքդ հաւաքես և կօշկակար դառնաս:

—Ես դեռ մի անդամ էլ հայրիկ և մայրիկ ձեզ կընւապեմ, պատասխանեց երեխան և սկսեց իր սուլակը սարքել:—Իսկ դուք պարտ եղէք ինչպէս ձեր նշանդրէքի օրը:

—Պարեր, բացականչեց հայրը: Քո խելքով մենք դրա հա-

մար ժամանակ ունենք: Աշխատել, աշխատել, ահա մեր կեանքը:

Բայց երեխան արդէն սկսեց վայրս ածել, նոյն վայրկեանին երբ նւագի տակ հայրը մօր հետ պարում էին մի դեղեցիկ ամառւան երեկոյ, երբ Աննան խօսք ուեց Լաբսի կինը գառնալ:

Ձայները հնչում էին մերթ ուրախ և մերթ տխուր, տահելով ալեքուխեան և երջանկուխեան տահմանում: Բայց կեչիի հոտը, պայծառ ամառւան տաքուխիւնը, լոյս աւեցին ամառւային պիշերւայ տասղերը...

Ձայները քաշում, վայրկեանում, դմայլեցնում էին... Լաբսո վեր պրեց ձեռքիչ կարկատելու պատրաստած կօշիկը: Աննան վայր պրեց կամի ամանը:

Եւ ահա ծերուկները ձեռք ձեռքի ուին և սկսեցին պարել: Սկզբում նրանց քայլերը դանդաղ էին, շարժմունքները ծանր և անտաշ, բայց ձայները պրպտեցին, լիև ուին նրանց և քանի գնում գործը արագ և արագ էր գառնում:

—Ես, իրաւի, տատնեաւիը տարեկան եմ, հրճւում էր Աննան:

—Իսկ ես քսան, բացականչում էր Լաբսը:—Դու իմ նշանածն ես և ես պատրաստ եմ ամբողջ կեանքս պարել քեզ հետ:

—Կեանքումս երբէք այսպէս երջանիկ չեմ եղել, բացականչեց Աննան, հազիւ նման պատյտ գալով:

—Երբէք իմ կեանքումս ես այսպէս առոյգ և ուրախ չեմ եղել, բացականչում էր Լաբսը տաքերը մինչև առաստաղը բարձրացնելով և կրնկները գետնին խփելով:

Իսկ հիմա ես կըգնամ, ասաց երեխան: Ես ուզում եմ հանգստանալ և ապատ քաշ պալ լոյս աշխատի երեսին—նստելով իմ տուլակի վրայ:

Եւ նա գուրս գնաց:

Կ. Զ.

Իմաստպից մեհեր

Հոր ջրհորը իր մէջին ջրերում արտացոլում է ասպղից երկնքի ամբողջ վեհութիւնը: Մանուկը անցնում է ջրհորի մօտով, կանգնում է և նրա մէջ քարեր է ձգում: Քարը ջարդում է ջրային հայելին, և աստղերը, որոնք փայլփլում էին նրա մէջ, մարում են: Այդպէս է և մտածողը: Բաւական է լինում մի ամենաչնչին աշխարհային հոգս, որը նրա հոգու մէջ է ձգում աւազին պատահած մէկը, որ նա չկոթէ՝ յաւիտենական ճշմարտութիւնների մասին հանդիստ մտածելու ժամանակ: Բայց այդ յուզմունքը լոկական է, և ինչպէս քարը ընկնում է ջրհորի ատկը, այդպէս էլ աշխարհային հոգսերը տեղ են բռնում նրա հոգու խորքերում, և խորհրդաւոր հայելին ազատում է նորից արտացոլել երկինքը:



Պաշտօնական խմբագրի՝
Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՅԻՍՈՒՍ ԽՍՉՄԱԿԻՐ

Մեծադիր, ընտիր գրաւիւր, պատրաստւած Պարիզում: Ամեն frhusnճէի տաճ սեանչելի զարդ. գինը 3 r. 10 հատը 25 r: Աղբիւր-Տարագի բաժանորդների համար հատը 2 r.

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Ձ Ե Մ Ա Ր Ա Ն

Բժշկական խորհրդակցութիւնների համար:

Բերլին: Schifflauerdam №2 *Փրիդրիխշարլէ Կայսրանի մօտ:*

Բժշկական խորհրդակցութիւնների ռուսական ձեմարանի նպատակն է. օժանդակ լինել Ռուսիայից Բերլին եկող հիւանդներին տեղական պրոֆէսորների խորհրդակցութիւնով օգտւելու: Ձեմարանի Ռուս բժիշկները ուղեկցում են հիւանդներին պատճառ մասնագէտ—պրոֆէսորների մօտ եւ մասնակցում են խորհրդակցութիւններին: Ցանկալի է որ հիւանդները ունենան իրանց բժիշկներից ստացած, գոնեա՛, տկարութեան կարճառօտ պատմութիւնը:

Հիւանդների ընդունելութիւնը վարում է ռուս բժիշկ.

Վ. Գր. Վալտեր (Խարկով):

Գիտնական նպատակով եւ գործնական վարձատրութեան համար, Ռուսիայից Բերլին եկող բժիշկները, կունենան ձեմարանում ընկերական ընդունելութիւն, խորհուրդ եւ օգնութիւն: Ձեմարանը ունի ֆիզիա-խոճորացոյցական լաբորատորիա, մասնագէտ բժշկի ղեկավարութեան տակ:

Բերլինի համալսարանի բժշկապետ՝

10—5 **Սիմէօն Գրիգորեւիչ Լեապլեւսկի:**

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ

Ա. հատոր

Գինը ճանապարհածախսով 1 r. 50 կ.

Դիմել ներկայիս՝ Вагаршапатъ *Епископу Бархударянцу*

Հարունակւում է 1903 թ. բաժանորդագրութիւնը

XXI տ. ԱՂԲԻՒՐ XXI տ.

Պատկերազարդ մանկական–մանկավարժական ամսագրի

Հրատարակւում է նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ

Լոյս են տեսնում տարեկան 12 №№

Ամառւայ սկզբի և վերջի ամիսների №№-ը միացրած են լոյս տեսնում

Ծ Ր Ա Գ Ի Ր

Մանկական բաժին

1. *Մանրավէպ, Զրոյց, Հեքիաթ, Պատմուածք:*
2. *Բանաստեղծութիւն:*
3. *Գիտութիւն:*
4. *Առեւս:*
5. *Ճանապարհորդութիւն եւ արկած:*
6. *Կենսագրութիւն:*
7. *Այլ եւ այլք:*
8. *Զուարճալիք. Մանկական Քրեօքելեան, շախմատի եւ այլ խաղեր, Ռեբուս, Թուաբանական խնդիրներ, Հանելուկ, Շուտասելուկ, Անկիպոս:*
9. *Երգեր նոտաներով:*

Մանկավարժական բաժին

10. *Մանկավարժութիւն:*
11. *Կրթութիւն եւ դաստիարակութիւն:*
12. *Մատենախօսութիւն:*
13. *Քննադատութիւն:*
14. *Առաջարկութիւն եւ խորհուրդ:*
15. *Փեդիեօն:*
16. *Ուսուն գործեր:*
17. *Պատասխանիներ:*
18. *Յայտարարութիւն:*

Աղբիւրի *տարեկան գինը* 3 *ր. արտաս.* 5 *ր. ամիսը* 25 *կ.*

Հասցէն՝ Редакція журнала „АГБЮРЪ“ (Tiflis) (Caucase) Rèd. de la revue «AGBUR».